



ՀԱՅՐԻԿ Ա. ԲԵՂՋ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

**ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ԵՎ ՌՈՒՍԱՑ ԱՐՔՈՒՆԻՔԻ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՐՁԵՑՈՒՄԸ
ՍԻՄԵՈՆ ԵՐԵՎԱՆՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՈՔ**

ասնութերորդ դարը մեր պատմության մեջ ամենահետաքրքիր շրջաններից մեկն է, որը միշտ մնում է մեր պատմաբանների ուշագրության կենտրոնում հակառակ այն փաստի, որ այդ դարը բազմակողմանիորեն ուսումնասիրվել է։ Մակայն դեռ շի կարելի ասել, որ եղած ուսումնասիրությունները սպառիչ են և չեն պահանջում հետազա երկար ու համառ պատմա-բանասիրական ջանքեր՝ ավելի և լուսարաններու այդ շրջանը և նրա հետ կապված շատ կարենոր այլ հարցեր։

Մեր նպատակից հեռու է այստեղ խոսել հայ-ուս հարաբերությունների մասին ընդհանրապես։ Մեր ցանկությունն է այդ հարաբերությունների ող անհայտ մի բանի կարևոր փաստերից, որոնք բատ արժանվույն չեն ուսումնասիրվել, դուքս բերել նոր եղակացություններ, որոնք վերաբերում են հատկապես։ Միմենը կաթողիկոսի ժամանակակից ամայն ակնկալում իրենց փրկությունը։ Այդ ժողովուրդները շատ իրավացի կերպով նուսաստանի հետ միայն կապում էին իրենց աղասագրության հույսերը։ Այդ ժողովուրդներից շատերը մանավանդ նույն դավանությունն ունեին ուսաների հետ և ուսներին համարում էին իրենց աղքային աղասարարները։

Անդրկովկասի այլ բրիստոնյա ժողովուրդները ևս մեծ համակրանքով ու հովանեսով են առաջարկվել գեղագիտականությունների խնդրին։ Միմենը երևանցին առաջին առաջին ակնկալում մեջ հարաբերությունների խնդրին։

Միմենը երևանցին առաջին կաթողիկոսն է, որի օրոք պաշտոնական հարաբերություններ են սկսվում էջմիածնի և հայուսաց արքունիքի միջև։ Որպեսզի այդ հարաբերությունների գաղտնիքը մեզ պարզ լինի, պեսոք է հաշվի առնել տնտեսական-քաղաքական այն պայմանները, երբ Միմենը կաթողիկոսը չաչալ եկեղեցու դեկը իր ձեռքը վերցրեց։

18-րդ դարի սկզբներից նուսաստանը գուրս էր եկել միջադպային ասպարեզ և համարլում էր ժամանակի խոշորագույն պետություններից մեկը։

Պարսկա-թյուրքական լծի տակ հեծող ժողովուրդները (հատկապես բրիստոնյանները՝ հույներ, չերնոգորցիներ, սերբեր, հունգարներ, բուլղարներ, վրացիներ և այլն) իրենց հայացքները սևսում էին գեղի հզոր նուսաստանը և վերջինից միայն ակնկալում իրենց փրկությունը։ Այդ ժողովուրդները շատ իրավացի կերպով նուսաստանի հետ միայն կապում էին իրենց աղասագրության հույսերը։ Այդ ժողովուրդներից շատերը մանավանդ նույն դավանությունն ունեին ուսաների հետ և ուսներին համարում էին իրենց աղքային աղասարարները։

Անդրկովկասի այլ բրիստոնյա ժողովուրդները ևս մեծ համակրանքով ու հովանեսով են առաջարկվել գեղագիտականությունների խնդրին։

Ռուսական հովի վրա 17-րդ դարի վերջերից գոյանում է հայ գաղղթականություն, որը վայելում է ոսւսաց կառավարության հատուկ հոգատարությունը։ Կառուցվում են եկեղեցիներ, բազմաթիվ հայեր կարևոր պաշտոններ են գրավում բանակում, պայտառում և հասնում տնտեսական մեջ հաջողությունների։ Տարիների հետ աճում է հայ ժողովրդի սերն ու համակրանքը գեղի նուսաստանը։

18-րդ դարի 40-ական թվականներին Ռուսաստանում տեղի էն ունենում քաղաքական իրադարձություններ, որոնք որոշ չափով ազգում են նաև Ռուսաստանի հայ դադութիւն և Հայ եկեղեցու վրա 1742 թվականին եղիսաբեթ կայսրութիւն հասուկ հրովարտակով կարգադրում է ակերացնել Հարկական եկեղեցիները Պետերբուրգում, Մոսկվայում և Աստրախանում, թողնելով վերջին քաղաքում միայն քարաշեն եկեղեցին և այնուհետև վրույլատրել դրանց կառուցումը¹:

Պայմանների թելազրանքով արժած այս ժամանակավոր և ժամանակոր բնույթ կրող դիպերը շեխն կարող ապակողմորոշել հայ ժողովրդին և եկեղեցական շրջաններին: Ժամանակները հասունանում էին և Հարկագոր էր գործնական և անմիջական միջոցների զիմել՝ Ռուսաստանի հետ մերձավոր և բազմակողմանի հարաբերություններ հասատելու համար: Սիմեոն Երևանցուց առաջ Հակոր Զուղայիցի և Հակոր Շամախեցի կաթողիկոսները նախնական փորձեր արեցին այդ ուղղությամբ, սակայն անհրաժեշտ արդյունքների հանդեցին: Պատճառը, իշարկե, այն շեր, որ Ռուսաստանից օգնություն էր հայցիում իր բնդհանուր, անորոշ խոսքերով, ինչպես կարծում է Կարապետ Եղյանը, այլ այն, որ այդ ժամանակ Ռուսաստանը տակալին նպատակահարժար շեր համարում ձեռնամուտ լինել Արեւելան հարցի լուծմանը: Ընդհակառակը, Հակոր Շամախեցին շատ պարզ կերպով նկարազրում է իր նամակում հայ և վրաց ժողովրդների կրած անուուր տառապանքներն ու հարրատահարությունների Կովկասի մահմեդական իշխանությունների կողմէց և օգնություն աղերսում «զաղգս» ողովում մեր ողործելի և զաղցս վրաց հոգար²:

Երերի այս դրության մեջ է, որ առա 1763 թվականին կաթողիկոսական Աթոռին բարձրում է Սիմեոն Երևանցին, որը բացառիկ տեղ է դրավում 18-րդ դարի մեր կաթողիկոսների մեջ: Սիմեոն Երևանցու ժամանակ է, որ Ս. Էջմիածնի և ուսաց արքունիքի հարաբերությունների պատմության մեջ բացվում է մի նոր շրջան:

Առաջին հարաբերությունները ուսաց արքունիքի հետ սկսվում են Աստրախանի թեմի հարցի առիթով: Գևուս Ղազար Զահեցու ժամանակ Աստրախանի հաւերը բողոքում են կաթողիկոսին իրենց թեմակալ ա-

1. Ս. Մ. Սոլովյա, «Ռուսաստանի պատմություն», Մանկա-Պետական գրք, 6-րդ հրատ., Հայոց Խ. Տ. Տ. 151 (ռուսերեն):

2. Լեռ, «Հայոց պատմություն», Երևան, 1946 թ., 7-րդ հատ., էջ 769:

ուաշնորդի հեռացվելու մասին, «Խոկ ի լան-լուր լինեն կաթողիկոսին, ժողովրդով խո-տեալ դիմարսելու, հանին ի յառաջնորդութե-նէն, և հրամանաւն թագաւորին ուսաց-գնին առաջնորդ ինքիանց զՄանիքանու ե-պիսկոպոս ուն ի վիճակին Գանձասարու ի ԽօնԴՐ» (1749) չմ:

Աստրախանը ուսացաւ զաղութիւն կինա-րոնն էր, և շեր կարող վրիպել Սիմեոնի ու-շագրությունից: Այդ խնդիրն այնքան էր, որ այս կարելի էր լուծել միայն արտաքին ուժի միջամտությամբ: Սիմեոնը մի նամակ է գրու (1766 թ.) Եկատերինա Երկրորդին և խնդրում, որ Ռուսաստանում ասպրոց հայերը ենթարկվին Ս. Էջմիածնին և այստեղից միայն նշանակիլի նրանց առաջ-նորդը: «Եւ յոյժ թախանձանութ խնդրեաց շնորհել գհրամանագիր մի այսր աղագաւաճ: Նամակի հետ Պետերբուրգում, կալորություն ու-ղարկում են նաև մի բանի նվերներ սուրբ մատուններից Թիֆլիսեցի Գավիթ վարդա-պետի հետ: Սիմեոնը հատուկ նամակներ է գրու Մոսկվայում և Պետերբուրգում ապրող նշանակուր հայերն (Եղիազար, Ղուկաս, Ներսես, Տովհաննես աղաներին, Աստավա-տեցի Մովսես, որը ուսաց Հովի վրա ա-ռաջին անգամ մետաքս արտագրելու համար նախարարներին հավասար պատիվ ուներ), որպեսզի նրանք իրենց աշակցությունը ցույց տային Գավիթ վարդապետին:

1768 թվականին ստացվում է այդ նամակի պատասխանը, որը ողկորություն է ա-ռաջացնում էջմիածնում: Կայսրութիւնը ոչ միայն բավարարում է Սիմեոնի բոլոր պա-հանչները, այլև նրան ուղարկում հատուկ նվերներ և խոստանում իր հովանավորու-թյան տակ վերցնել նրան և ամբողջ պատ-վական հայ ժողովրդին: «ՄԵՆՔ, ի հետևումն բարձրարժան մեր նախորդների, հավասա-րապես բարեհաճում ենք, ինչպես ամենա-անբասիր Սիմեոն պատրիարքին, նմանա-պես և նրա պատրիարքական գանի ապագա հաջորդներին, նույնպես և յուղաշիներին ու կառավարիչներին և ամբողջ անբասիր հայ ժողովրդին պահնել մեր կաւսերական ո-ղործածության և բարեհաճումների ներքով»:

Եկատերինա Երկրորդի այս վերաբերմուն-քը դիմի Ս. Էջմիածնը պատահական շեր, և ոչ էլ բխում նրա հայ ժողովրդի հանդեպ ունեցած համակրանքից: Այն բխում էր Ռու-

3. Սիմեոն Երևանցի, «Համբու», Վաղարշապատ, 1873 թ., էջ 49:

4. Գյուղ քահ. Աղանյանց, Եղիվան հայոց պատմու-թյան, 3-րդ հատ., Թիֆլիս, էջ 498:

5. Եղողովածու ուսական Միավուազան հասար-կության, Մանկա-Պետական գրք, 1893 թ., էջ 155 (ռու-սերեն):

սամոտանի... արտաքին քաղաքականության շահերից, որը նախատեսում էր Հայերին օգտագործել Հարավ-արևելյան նվաճումների համար։ Դեռևս 1760-ական թվականներին, երբ Հովսեփ Էմինը Պետրոպոլում բանակցություններ էր վարում, «Խուսական ապագա կայսրությին (Եկատերինա Երկրորդ-Հ. Ա.) արդեն այն ժամանակ կարծիք է հայունել, որ Հայկական պետության գոյությունը մեծ նշանակություն կունենար ուստական կայսրության համար, Հատկապես Թյուրքիայի գեմ պատերազմի մտնելու դեպքում...»⁶

Այս նպատակով է, որ Եկատերինան իր կայսրության առաջին տարիներից առանձնահատուկ բարյացակամությամբ է վերաբերվում Խուսաստանում ապրող Հայերի հետ։ Նա հատուկ համանությամբ Եղիսաբեթ կայսրությունու օրոք կատարված սահմանափակումները վերացնում է, ուստահայերին սեփական եկեղեցի կառուցելու իրավունք է շնորհվում, այլ արտօնությունների հետ։

Խուսական արքունիքից ստացված հուսադրական նամակները մեծ ողբերություն են ստեղծում հայ ժողովրդի և կաթողիկոսի սրատում։ Սիմեոն կաթողիկոսը շերմորեն արձագանքում է Եկատերինայի նամակին։ Արքունիքը լավ ընդունելության է արժանացնում Սիմեոնի նամակը։ Ի նշան շնորհակալության Սիմեոն կաթողիկոսը հատուկ մաղմանք է շարադրում և ազօթը է հորինում ուստաց պետական և կայսրերի մասին, որոնք պետք է կատարվեին Խուսաստանի հայոց եկեղեցիներում ամեն տարի, կայսերական տոնի առթիվ։ Սիմեոնի կարգադրությունը ամրող հայ ժողովրդի երախտագիտության ու համակրանքի մի վառ արտահայտություն էր զեպի քրիստոնյա ու պաշտպան հզոր Խուսաստանը, որի հետ նա կապել էր հայ ժողովրդի պատագության իր սրտագին և խանգավառ հույսերը։

Կայսերական մաղմանքի հաստատումով, Սիմեոն կաթողիկոսի օրով կայտն հոգ ստեղծվեց ուստա և հայ Հարաբերությունների հետագա զարգացման և ամրապնդման համար։ Եվ իրոք, շուտով սկսվում էն ավելի սկզբ ու մտերմական Հարաբերություններ Սիմեոն կաթողիկոսի և ուստաց արքունիքի միջև։ Այդ մասին Սիմեոն կաթողիկոսը գրում է. «Յայած հետէ եղեւ ընտանութիւն և մեծ սկզ թագաւորին ուստաց և նախարարաց նորին, և նիփսկոպոսաց, առ Ս. Աթոռս, և առ յագգու մեր որպէս տեսանես զգրիանս նոյնին»⁷։

6. Ա. Բ. Հովհաննեսյան, «Հայ ազգային ազատագրական շարժումը ԽVIII հարյուրամյակի 60-ական թվականներին», (ՍՍԾՄ Գիտությունների ակադեմիայի տնօկնատու, Պատության և Փիլիտության սերիա, № 2, 1946 թ., էջ 143 (ռուսերեն))։

7. Սիմեոն կաթողիկոս, «Համարու», էջ 40։

- Սիմեոնն այստեղ նկատի ունի, Եկատերինայի, իշխան Պուտյումկինի, կոմս Պանինի, Սովորովի, Սոսկվայի միտրոպոլիտ Պլատոնի, Աստրախանի արքեպիսկոպոս Սիֆոսիի և ուրիշների հետ ունեցած նամակագրությունները, որոնք զգացման առինքներով և կրում բարեկամության կնիքը։

Խուսաստանի համար ուներ չափազանց մեծ նշանակություն։ 1769 թվականին Եկատերինան մի կոչ է հաստարակում զանազան լեզուներով, որը տարածվում է Բալկանյան երկրների (Մոլդավիա, Վալաքիա, Բուլղարիա, Ալբանիա, Սերբիա և այլն) քրիստոնյա ժողովուրդների մեջ։ Կոչով հայուսարարվում էր, որ թյուրքիքը պատերազմ են սկսել, որպեսզի ոչնչացնեն քրիստոնեությունը և բոլոր քրիստոնյաներին։ Եկել է ժամանակը ազատվելու։ Թյուրքիայի ստրկական լժից Քրիստոնյա չէ նա, ով այս վճռական ժամանքին մի դիմում թշնամու դիմ։ Խուսաց պրոպագանդան իր գործը կատարում էր նաև Անդրկովկաստում, աշխատելով ոտքի հանել վրաց Հերակլ և Սովորուն թագավորներին, Արարատի և Ղարաբաղի հայերին ու մյուս հպատակ ժողովուրդներին։ Հերակլն ու Սովորունը օդանական վորք են խնդրում Խուսատանից։ 1769 թվականին սուսական մի փոքրիկ չոփատ մտնում է Վրաստան։ Ինչպես երևում է Պանինի նամակից⁸, ուստաները նպատակ չին ունեցել այս կողմում իրենց զորքերի համար նոր ճակատներ բացել, այլ լավագույն կերպով օգտագործել անզական ուժերը։ Համենայն դեպս սուսաց զորամասի մուտքը Վրաստան չէր կարող խորը ազդեցություն չունենալ Անդրկովկասի ժողովուրդների տրամադրությունների վրա։ Հերակլի, Վրաստանից Խուսաստան գործուղված Խսկաբոլովի, Մուրավլյովի և Հովսեփ Արլաւիլյանի հետակա զեկուցագրերից⁹ և ուրիշ նամակներից¹⁰ երեսում է, որ այն ժամանակ հայերի մեջ

Տ. Ա. Բ. Հովհաննեսյան, «Հայ ազգային ազատագրական շարժումը ԽVIII հարյուրամյակի 60-ական թվականներին», (ՍՍԾՄ Գիտությունների ակադեմիայի տնօկնատու, Պատության և Փիլիտության սերիա, № 2, 1946 թ., էջ 143 (ռուսերեն))։

9. Պ. Գ. Բուտկով, «Եղութեր Կովկասի նոր պատմության 1722—1803 թվականների համար», 1-ին մաս, Սանկտ-Պետերբուրգ, 1869 թ., էջ 457 (ռուսերեն)։

10. Ա. Բ. Հովհաննեսյան, «Խուսաստանը և հայ ազատագրական շարժումը ԽVIII հարյուրամյակի 80-ական թվականներին», Երևան, 1941 թ., էջ 44—45 (ռուսերեն)։

զինված պատամբություններ էին պատրաստվում, որ հայերը, եղիգիները, ասորիները... անհամբիր սպասում էին ուսաց քառակի գալստյան, որպեսզի միանալին նրան և կովեխի իրենց ազատության համար Գրդաբարձրար մենք մանրամասն տեղեկություններ չունեն Սիմեոն կաթողիկոսի արդ շրջանի և ընդհանրապես նրա քաղաքական գործունեության մասին: Առաջն եղածն է լրապական է, որպեսզի հերթին նրա անփան և դորժունեության շուրջը հյուսված անպատ այն կարծիքները, որ իրը նա Բուսատանին համարելուց միայն այս կողմ ոչ մի քայլ առաջ շդնաց, որ նա, իրը, ընդհանրապես, թշնամի էր ազատազրական ապրութական շարժումներին և այնու «Անփակեաբուրդի տեղեկազիր»-ը իր 1770 թվականի փետրվարի համարում տպել է մի տեղեկություն այն մասին, որ Սիմեոն կաթողիկոսը հաստիկ կարգազրություն է արել Կոտանդնուպալուսում և այլուր ապրող հայերին՝ միանալ ապահամր հույներին և նրանց հետ միասին պայքարել ընդհանուր թշնամու թյուրքերի դեմ: «Հաստատվում են Պարսկաստանում տեղի ունեցող խոշոր սպառազինությունների վերաբերյալ լուրերը: Հայերը թյուրքիայից անշատվել են և նրանց պատրիարքը (Սիմեոն կաթողիկոս— Հ. Ա.), որը մեծ իշխանություն ունի, ծանուցել է իր հավատակիցներին, որոնց թիվը շատ մեծ է Կոտանդնուպալուսում, որպեսզի նրանք հույների հետ համերաշխություն պահպանին և արդ եղած դեպքում գործեն միացյալ ուժեղություն¹¹:

Նույն տեղեկագրի մայիսի համարում կարդում ենք նաև այն մասին, որ այդ ժամանակ Հայաստանում և Արարատյան դաշտում լինում են ժողովրդական ընդհանուր հուզութներ: «Զմյուռնիայից հազորություն են, որ Հայաստանում և Արարատ լեռնան մերձակայրում ընդհանուր հուզութը է տեղի ունեցել»¹²:

Այդ հուզութները սերտորին կապված են ռուսական բանակի հաղթանակների և տուաշխացման հետ:

Քաղաքական այսպիսի պայմաններում Սիմեոն կաթողիկոսը Ռուսաստանի հայերի առաջնորդ է նշանակում (1773 թ.) իր տաղանգավոր աշակերտներից մեկին՝ Հովսեփ արքեպիսկոպոս Արքությանին, որն հետագայում այնքան կարևոր դեր խաղաց Հայեկեցական և ազգային-ազատազրական խնդիրներում: Նա կարություն է շուտով մերձակայր Հարաբերություններ ստեղծել:

11. Պ. Գ. Բաւեկով «Նյութեր Կովկասի նոր պատմության...», էջ 464:

12. Նույն տեղում, էջ 465:

Ռուսաստանում ապրող անվանի հայերի հետ (կազմարյաններ և տրիչներ) և նրանց միջոցով՝ ուսաց արքունիքի հետ Հավանական է, որ Սիմեոնը հատուկ սպասակներով ու հուգաբով է Արքությանին ուղարկում Ռուսաստան Սիմեոնը հակառակ չեղել Արքության բազարական կաթողիկոսի համարձակության և ուղղության Ընդհակառակը, Արքությանը ըստի համարձակեցր քաղաքական խնդիրներում այնպես վրատ ու համարձակ մինել, իմ նրա հետ Սիմեոնը կաթողիկոսի վստահությունն ու համարձականը Արքության իր նամակներում միշտ մեծ երախտագիտական թյամբ ու պարձանարով է խոսում Սիմեոնի մասին, ինչպես նրա կենդանության, այնպես և մահվանից հետո: Այս հանգամանքը ցույց է տալիս, որ Սիմեոնի և Արքությանը հայացքների, ձգումների ու նպատակների միջև եղել են ընդհանրություններ:

Հարաբերությունները ուսաց արքունիքի հետ ամելի են սերտանում 1780 թվականից հետո, երբ Ռուսաստանը պատրաստվում է պահերազմել Պարսկաստանի դեմ: Հայերը և Պարսկաստանը լժի տակ հեծող ժրուածով անհամբեր սպասում են ուսական բանակին, հուսալով, որ նրա օնտությամբ կարող են ազատվել: Այս մասին Պարսկաստանում ուսական դեսպան Պետրովիկին 1780 թվականի սեպտեմբերի 25-ին արտաքին գործերի մինիստրության դրած իր զեկուցազրում հայտնում է, որ «...ամբողջ տեղական ժողովուրդը, սկսած Դերենդից և Գիլանի նահանգից» պարսկեները, գանձուկան ասք և հոգագործները (բացի նրանցից, որոնք որևէ իշխանություն ունեն), և առանձնապես հայերը, բոլորը միահամուռատում են, որ իրենք անհուն ուրախությամբ անհամբեր սպասում են ուսական զորքերին և հենց որ նրանք ուոր դնեն տեղական սահմանները, ապա վերջիշջալ բոլոր վայրերը, առանց որևէց զիմանադրության, կնվաճվեն, որովհետեւ հապալակ մողովուրդներն իրենց իշխանավորների շնորհիվ ուժասպառ են եղել և ծայր աստիճան աղքատության են մատնիք, իսկ ուսական զորքերին գալով, նրանք հույս ունեն ազատվել անտանելի լժից¹³:

Քաղաքական այս անցքերին զուգադիպում է Հովսեփ արքեպիսկոպոս Արքությանի Պետրությունը գնալը և քաղաքական սերտ հարաբերությունների մեջ մտնելը արքունիքի հետ:

Գենես 1777 թվականին Արքությանը գրում էր Սիմեոնին, որ նա կազմայաների խըն:

13. Ա. Թ. Հովհաննեսիայան, «Ռուսաստանը և Հայ ազատազրական շարժումը XVIII հարյուրամյակի 60-ական թվականներին», Երևան, 1947 թ., էջ 30—31:

դրանքով մտադրված է գնալ Պետերպուրգ՝ օծելու նրանց նոր կառուցած հայկական եկեղեցին Սիմեոնը իր համաձայնությունն է առաջիս այդ մտադրությանը և պատվրում Արդությանին, որ վերջինս Պետերութից միշտ տեղյակ պահեր նրան այնտեղի իրադրությունների մասին։ Սակայն Արդությանը ճանապարհվում է միայն 1779 թվականին, երբ Պետերութիւնը մնեց պատերազմի ծրագրեր էին նախատեսվում։ Հունվարի 17-ին հասնելով Մոսկվա, Հ. Լազարյանի հետ միասին ուղևորվում է Շովկիսի վերջերին և հասնում Պետերութիւնը օգոստոսի 5-ին։ Այս տարիների մասին Արդությանն իր օրագրում մանրամասն գրում է։ Պոտյումիկնը լսելով նրանց գալու մասին, նույն օրը նեթ կանչում է նրանց կայսերական պալատ և քննարկում նրանց հետ պետական և քաղաքական գաղտնի խնդիրները։ Նա հետաքրքրվում է նաև Հայ Եկեղեցու գործերով և խոստանում Արդությանին ուժիկ կապել։

Վրա է հասնում 1780 թվականը։ Հունվարի 7-ին Իվան Պետրովիչ Գուրիչը ներկարանում է Արդությանին և հայտնում ուստական գործերի պարսկական արշավանքի ու նպատակների մասին։ Բազմաթիվ հարցումներ է անում Պարսկաստանի, զանազան քաղաքների հեռավորության, հայոց զորքերի թիվ, թյուրքական, Դերբենդի, Գիլանի, Երևանի, Ղարաբաղի, Շիրվանի մասին, որտեղով պիտի անցներ ուստական բանակը։ «Եւ մեր որքան դիտէաք, — գրում է Արդությանը, — ասացաք ինքն զրեաց ուստակին և տարաւ»¹⁴։

Հունվարի 2-ին նրա մոտ է զնում զիներակ Սովորովը և մոտ երկու ժամ խոսում միենում նյութի մասին։ «Հայոց և մանրամասնարար զկացութենէ Սրբոյ Աթոռոյն մերոյ էջմիածնայ և յուսագրութիւն արար յոյժ, որպէս թէ նորոգելոց իշեն ի մեզ իշխանութիւն ինչ, — գրում է Արդությանը»¹⁵։

Հունվարի 3-ին Պոտյումիկնը նորից է կանչում Արդությանին ու Լազարյանին իր մոտ և միասին քննարկում քաղաքական հրատապ խնդիրներ հայոց թագավորության վերականգնման և Հայաստանի պատապքության մասին, «Ո միասին զնացաք առ նա, — գրում է Արդությանը, — և բազում ինչ խօսեցաք վասն այցելութեան ազգին մերոյ և աշխարհին և բազում ինչ ազա Յովհաննէս պատմեաց և հայերէն աշխարհացուցիւն զգաւառն Հայաստանեաց և զերեկի քաղաքն ցուցաք և ինքն յիշտ բազում հարցանութեանց զկացութիւնէ ազգին մերոյ և Սրբոյ Աթոռոյն և զկաթողիկոսին։ և մեր

թախանձելը նորոգել ի մեզ զմասնաւոր տէրութիւն ի մեծն Հայաստան ի քաղաքն երեան, պատապիաննեաց թէ կարելի է, բայց պիտոյ է պատրիարքն ձեր քանիօք իշխանոր խնդիր ի գործ ածիցն վասն փրկութեան ձերոյ, որ մեր այնու ի յօգնութիւն ձեզ եկեսցաւքով»¹⁶։

Այստեղ ծագում է մինչև այժմ պատմարանների ուշագրությունից վրիպած այն հարցը, թէ արդյո՞ք Արդությանն ու Լազարյանը հայոց աղաստագրության և թագավորության վերականգնման վերաբերյալ Պոտյումիկնի հետ խոսակցությունների մասին գրեցին Սիմեոն կաթողիկոսին և, երկրորդ՝ արդյո՞ք Արմենոնը որևէ պատասխան ուղարկեցին կիշապիսի վերաբերմունք ցույց տվեց այդ հարցի նկատմամբ։

Այս մասին մինչև այժմ լուել են այն պատմառով, որ սրոշակի նյութեր չեն եղել, և Սիմեոնի շուրջը Հյուսված սխալ կարծիքը արդիւր է հանդիսացել մանրակրիս կերպով զննելու գոյություն ունեցող փաստերը։ Ինչպես մենք պիտի տեսնենք, Սիմեոն կաթողիկոսը, թեև պատշաճավոր զգուշությամբ, բայց և այնպես միշտ հետեւել է ներքին և արտաքին քաղաքական անցուզարձերին և, ամենից կարեռը, մասնակցել նրանց, փայտական ինչ-ինչ հույսեր ու ծրագրեր, և վրատան է եղել Ռուսաստանի հաղթանակի համար։ Այս է պատճառը, որ Արդությանին և Հովհաննես կազարյանից լսելով Պոտյումիկնի առաջարկների մասին, թե որպեսզի Ռուսաստանը իրավունք ունենա վերականգնելու հայկական թագավորությունը, պետք է որ հայոց կաթողիկոսը և նշանավոր իշխաններ մի խնդրագիր ներկայացնեն ուստաց արքունիքին այդ խնդրի վերաբերյալ, Սիմեոնը շատպատմ է զրել այդպիսի մի խնդրագիր և վերին, նա միաժամանակ հատուկ համակ է գրում Պարաբաղի հայ մելիքներին, որպեսզի նրանք կողմից գրեն մի խնդրագիր։ Այդ խնդրագիրը մինչև այժմ մնում է անհայտության մեջ։ Բայց որ խփափեն Սիմեոնից նման խնդրագիր պահանջվել է և նա ուղարկել է, այդ մենք իմանում ենք հետևյալ կողմնակի փաստերից։ Առաջինը Հայ-ուս կաշնագրերի մասին եղած տետրակն է ննկատի ունենք «Թիվան»-ի 2-րդ հատորում հրատապկանը, որի հեղինակը ժամանակակից է, բայց, զդրախտարար, գեռևս անհայտ։ Այդ տետրակում պետերության բանակցությունների և խնդրագրերի մասին հետևյալն ենք կարգում։ «Յայտնէր (Արդությանը—Հ. Ա.) զնեղութիւնս ազգի մերոյ նկատերին է կայսրություն, յորմէ առնոյց բանս նորոգելոյ զկործանեալ թագաւորութիւնս հայոց

14. Գյուտ քահանա Ազանդանց, «Դիվան հայոց պատմագիւն», 9-րդ հատ., Թիֆլիս, 1911 թ., էջ 23.

15. Նույն տեղում, էջ 24։

միջնորդութեամբ մեծ կուսի Դրիգոր Պատեամկինի, զորմէ ծանուցանէ երանելի կամոցիկոսին Սիմէօնի բատ կարգաւորաւթեանց իրեանց կարգաւորաց ուսաց: Ի բաշորդել խնդրոյն զրել սահմանեցին ի մէջ երկուց տղացն զամանական կանգնելոյ զմագաւորութիւնն հայոց»^{17:}

Այս խոսքերը կես առ կետ համբնկում են Արդությանի ասածների հետ: Այսահեղ միայն ավելացվում է այն, որ Արդությանը Պոտյունինի և, պետք է ասել, ուսուց արքունիքի պահանջի մասին ձանուցում է Միմեռնին, իսկ վերջինս էլ զրական պատասխանումը Ավելացվում է նաև, որ խնդրազիրը ուղարկվելոց հետո է միայն, որ կնքվում է զաշնագիրը հայոց թագավորության վերանորոգության և նրա հետ կապված հարցերի վերաբերյալ՝ Գայնագիրի մշակման գործում պետք է որ Միմեռնը որոշ զեր խաղացած լինի, քանի որ նրա միարը ևս զրացված էր հայոց թագավորությունը վերականգնելու խնդիրներով: Գժրախոտարար չուսուվ մահը վրա է համում և Միմեռնը իր զործը թողնում է կև հանապարհն: «Եւ մինչ զոն զործէր (Միմեռնը—Հ. Ա.) վասն վերանորոգութեան թագաւորության հայոց, ոչ ժամանեալ այն, փոխցաւ առ Աստուած յամի Տետոն 1780, ի 20 յուլիսի»^{18:}

Մենք իրավունք ունենք կասկածի տակ առնելու վերը բերված փաստերի իսկությունը, եթե այն չհաստատվեր մի այլ փաստով: 1781 թվականի սեպտեմբերի 2-ին Պարարագի մելիքները ընդհանուր ստորագրությամբ մի նամակ են գրում Ելիասերինային, Պոտյունինին և Սուվորովին, խնդրելով օգնել և հովանափորել հայ ժողովրդին, ինչպես որ պատվիրել էր նրանց Միմեռն կաթողիկոսը^{19:}

17. Գյոււ բահանա Ադամեանց, «Դիման հայոց պատմություն», 4-րդ հատ., էջ 735:

18. Նույն տեղում, էջ 730:

19. Այս նամակը, որի սուսերն անբար միայն այտելի է, սպաված է Ա. Բ. Հովհաննեսիային Շեռուասանը և հայ պատապրական շարժումը XVIII Հարյուրամյակի 80-ական թվականներին» աշխատության վերցում ուրիշ շատ փաստաթղթերի հետ միասին Այս կարենը վագերազիրը նա բայ արժանիւն ուշագրության շի առել:

Պոտյունինին զրած նամակում նրանք խոսում են Սիմեոնի մասին, նրան զրած և ուղարկած խնդրազիրի, այդ խնդրազիրի բովանդակության մասին: Նրանք զրում են, «որ իրենք տեղեկացնել են, «...որ Զերդ Պայծառափայությունը ուներ և ողորմածություն եք ցուցաբերում մեր խեղճայուղի նկատմամբ: Ասամի մենք համարձակությունն ունենք պարզաբանելու մեր ծանր կացությունը և խնդրելու Զերդ հայրական աստի ողորմածությունը, ինչպես արգել Զերդ Պայծառափայությանը խնդրել է հանդիպությունը, ինչպես արգել Զերդ Պայծառափայությանը խնդրել է հանդիպությունը և ամրուց հայ ազգին Զերդ Բարձր Պայծառափայության հովանավորությանը և մեզ ավանդել է կրկնել սույն խնդրանքը և ապավինել Զերդ Պայծառափայությանը բարձրը ողորմածություններին, որպեսզի հեծեծող ու տառապյալ հայ ժողովրդին պահումը պահում է կրկնել աղքատ կարկառեր և աղատեր մեր թշնամիներից, որպէս հավիտենական հիշատակության կարժանարար և նաև համար վարձատրություն կատանար Տիրոցից և որհնություն Քրիստոսից»^{20:}

Ուրեմն, կասկածի տեղիր չի մնում, որ իրաք Միմեռն կաթողիկոս Երևանցին Պոտյունինին հատուկ խնդրազիր է զրել Հայոստանը աղատազրելու մասին համաձայն նրա պահանջի: Այդ խնդրազիրը չի հայտնաբերված: Անշուշտ, հնատպայում տքնաշան գիտական պրագումների շնորհիվ պիտի հայունարերին արխիվային նորանոր նյութեր, որոնք մի անգամ ես պիտի ցուց տան, որ Միմեռն Երևանցի կաթողիկոսը ոչ միայն համակրանք է, տածել զեպի Ռուսաստանը թշնամին կարծվում է, այլև այդ ուղղությամբ կատարել զործնական բայլեր, որոնք մեծապես նպաստեցին ուսու-հայ հարաբերությունների մերձականացմանը մասնավորապես:

20. Ա. Բ. Հովհաննեսիային, «Ռուսաստանը և հայ պատապրական շարժումը XIII հարյուրամյակի 80-ական թվականներին», էջ 201:

